

ծունկի եկած, մասնաւոր բարձիկով մը տաք թոնիրի կողերուն կը փակցնէր բաղարջ հացի խմորները:

Փուռի մէջ եփած հաց ուտողներու համար հաճելի փոփոխութիւն մըն էր թոնիրի հացն ու պոպոշը, երկայն ու չոր նկանակ մը, թրջելէ վերջ ուտելու համար:

Ամէն տուն իր հաց եփելու օրն ունէր, բայց պայման էր ժամանակին լուր տալ կարգը ապահովելու համար: Վա՛յն էր եկեր այն կնոջ որ նէօպաքը չէր առած այսինչ ժամուն իր հացը եփելու համար:

Ոմանք դեռ փուռը չբացուած առաջնութեան կարգով նշան մը կամ արամանը կը դնէին իրաւունք ձեռք բերելու համար:

Ընդհանրապէս պատուոյ խօսքի պէս կը յարգուէր այս անգիր ու անխօս պայմանադրութիւնն ալ, բայց վէճերու առիթ է տուած ու կ'ըսէին թէ կային կիներ որոնք կը մեղանչէին այս վստահութեան դէմ անդթօրէն, թոյլ տալով որ դրացիին խմորը թթուի, աշխի ու ընտանիքը ամբողջ շաբաթը թթու հաց ուտէ:

Երբ իր կարգը դար, տանտիկինը կը կնտէր իր ջամորը, կուտար իր հրահանգը փոսպանին ու կոնքի քերունքը որպէս թթխմոր պահելով կը դնէր արամանին մէջ:

Եփուած տաք նկանակները կը շարուէին վառելափայտին վրայ, պողելու համար, այլապէս թարմ հացը կը ճնշուէր, կը տափակնար ու կըծըկ կ'ըլլար:

Երբ փոսպանը իր իրաւունքը նկատուած վերջին հացը մէկ կողմ կը դնէր, այդ լսել էր թէ փուռին մէջ այդ տան պատկանող հաց չէր մնացած:

Տօնական օրերու դաթան ալ կ'եփուէր փուռերու մէջ:

Մասնաւոր խնամքով կը պատրաստուէին հարսանիքի լայնածաւալ քաթաները, փեսայի խաչքաթան ու խմորեղէնները:

Տուներու մէջ ալ երբեմն թոնիրի կողին կամ սաճի վրայ կ'եփէին (աւնկ) չխմորուած հաց, բաղարջ, իւզով հացու (պազլամա) թանձր լաւաշ:

Հացը որպէս մարմին Քրիստոսի եւ հիմնական սնունդ՝ յարգանքի առարկայ էր ժողովուրդի աչքին:

Մեղք ունէր հացը կտրել դանակով: Կը զգուշանային անոր վրայ կոխելէ:

Այրած հաց ուտողներ կը հաւատային թէ դրամ պիտի գտնեն շուտով:

Հաց Ուտելը կերակուրի սեղան նստելու նշանակութիւնը ունի տեղացուոց բերնին մէջ